11535

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ԵՎ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1

ք. Երևան «26» « ապրիլ » 2021 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ արմավիրի մարզի ակնաշեն եվ մրգաստան համայնքներում գնված առանձնատների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 600 000 (Երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի

ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված վճարումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ Գլխավոր քարտուղար Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն ՀՎՀՀ 01273917 ՀՀ 220573330143000 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրեն Հ.Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 26» ապրիլ 2021 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/501	Տես Հավելված 1.1	դրամ	*1 800 000*	*1 800 000*	*1*	Տես Հավելված 1.1	ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում:
2	71241200/502	Տես Հավելված 1.2	դրամ	*1 800 000*	*1 800 000*	*1*	Տես Հավելված 1.2	
					3 600 000			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
Գլխավոր քարտուղար՝
Ա. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ճարտարին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ 01273917
Հ/Հ 220573330143000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝
Հ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«26» ապրիլ 2021թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
(ՆԱԽԱԳԾԱՅԻՆԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Թումանյան փողոցի թիվ 19 հասցեում գնված առանձնատունը որպես տարեցների շուրջօրյա խնամքի փոքր տուն վերակառուցման հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	• ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի տարեցների շուրջօրյա խնամքի փոքր տունը (այսուհետ՝ փոքր տուն) կազմակերպվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Ակնաշեն համայանքի Թումանյան փողոցի թիվ 19 հասցեում գնված առանձնատունը վերակառուցելու միջոցով, • գնված առանձնատունը երկհարկանի է, տուֆակերտ «Միդիս» տիպի շարվածքե պատերով, բնակելի մակերեսը կազմում է 282 քառ.մետր, զբաղեցրած և օգտագործման հողամասի մակերեսը 0.87 հա՝ համաձայն առանձնատան սեփականության իրավունքի N 18022020-04-0060 վկայականի, • ձեռքբերված առանձնատան հնարավորություններից ելնելով՝ նախատեսվում է վերակառուցման միջոցով փոքր տանը ապահովել 10-12 տարեցի շուրջօրյա բնակությունը:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	Նախատեսվում է՝ • ուսումնասիրել առանձնատան տեխնիկական վիճակը և սեյսմոկայունությունը, • արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակը, • նախագծով նախատեսել փոքր տան ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության, կապի, ջրահեռացման, հակահրդեհային ազդանշանման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում, • նախագծով նախատեսել փոքր տան համալրում՝ հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ,

	առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, վերհան սարք), • նախագծով նախատեսել փոքր տան տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, ստվերածածկ մաս, տարածքը պետք է ցանկապատված լինի առավելագույնը 1,6 մետր բարձրությամբ մետաղական ցանցե ցանկապատով, փոքր տան տարածքը պետք է ունենա նաև առանձնացված մաս, որտեղ պետք է տեղադրված լինեն աղբամաններ՝ հիմնական շենքից անհրաժեշտ հեռավորությամբ, • կառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն (գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման՝ առկայության դեպքում) համակարգեր՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով, իսկ կոյուղու կենտրոնացված համակարգի բացակայության դեպքում տեղադրել բիո-մեխանիկական մաքրման կայան կամ կառուցել կոյուղու կուտակման հոր՝ անհրաժեշտ հաշվարկային ծավալով, • նախագծման ընթացիկ աշխատանքները և առաջարկվող նյութերը աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ: **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** • փոքր տան կառուցման նախագիծ, նախատեսված 10 - 12 տարեցի շուրջօրյա խնամքի իրականացման համար, • ստվերածածկ մաս՝ 10 - 12 մարդու հաշվարկով, • այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների:
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** • ՀՀ կառավարության 07.11.2019 թ. N 1555 - Ն որոշում: **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** • Ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ, • գնված առանձնատան, զբաղեցրած և օգտագործման համար հատկացված հողամասի սեփականության վկայական՝ անհրաժեշտ նպատակային և գործառնական նշանակություններով, • արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի

	եզրակացություն, • նախագծման պայմանագրին կից նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), • ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (բնապահպանություն, առողջապահություն, քաղաքաշինություն և այլն), • այլ անհրաժեշտ փաստաթղթեր: **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** • ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին», • ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին • ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման, • ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու և հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին • ՀՀՇՆ II-7.02-95. Շինարարական նորմեր. շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների • ՀՀ կառավարության 13.12.2007թ «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները

	հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020 թ.-ի N 95-Ն հրամանով հաստատված «Հասարակական շենքերի և շինություններ» շինարարական նորմեր, • ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման, • ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին», • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ թիվ 102-Ն հրաման, • «Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, • ՀՕ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, • ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ, • ՀՀ կառավարության 25.12.2014 թ թիվ 1504-Ն որոշում «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին», • ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր:
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային

	Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» Նախագծի բոլոր բաժինները մշակել՝ հաշվի առնելով առաջադրանքի բնույթը /երկհարկանի քարե առանձնատան վերակառուցում/: <u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u> 1. Ընդհանուր բացատրագիր, 2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ): 3. Ճարտարապետաշինարարական մաս • Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/: 4. Կոնստրուկտիվ մաս • կոնստրուկտիվ լուծումներ, • կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն: 5. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր), • էլեկտրամատակարարման /ներառյալ հողանցման համակարգը/, լուսավորության /Ինսոլիացիոն հաշվարով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, կապի, հակահրդեհային ազդանշանման ցանցեր և այլն, • Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն, • Կահավորման և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով հագեցման նախագիծ՝ ներառելով ընդհանուր նախահաշվի կազմի մեջ, որպես առանձին բաժին՝ ընդ որում հագեցումը պետք է լինի ամբողջական: 6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ: 7. Շինարարության կազմակերպման նախագիծ: 8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում: 9. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ: 10. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: 11. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ: **Համաձայնեցումներ**

	Նախագծի համաձայնեցում 1. Համայնքի ղեկավարի, 2. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, 3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, 4. ՀՀ առողջապահության նախարարության, 5. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ: 6. Ոլորտի գլխավոր կարգադրիչ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
Այլ պահանջներ	*Եզրակացություններ* Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում՝ • Նախագծողի կողմից առանձնատան տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունների, տեխնիկական պայմանների ձեռքբերում: **Փորձաքննություններ** • Որպես միջինից բարձր ռիսկայնության (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ՝ նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում, • Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության • Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման գործընթացի ապահովում՝ Պատվիրատուհի հետ համատեղ: **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** • փոքր տան շահագործման առավելագույն ժամկետ, • առանձին նյութերի, պատրաստվածքների շահագործման

առավելագույն ժամկետ,

- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ:

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, հայերեն և ռուսերեն լեզուներով, նախահաշիվը ներկայացնել նաև էլեկտրոնային տարբերակով կրիչի վրա:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 օրացուցային օր:

<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>

Ըստ անհրաժեշտության (եթե փոքր տան պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

1. **Առաջադրանքով նախատեսված հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներին համապատասխան՝**

Փոքր տունը պետք է ունենա՝

- երկու մարդու հաշվարկով ննջասենյակներ, յուրաքանչյուր ննջասենյակի մակերեսը պետք է կազմի 13-ից 15 քմ մակերես,

	• երեք սանհանգույց (3 զուգարան, 3 լոգարան՝ ցնցուղով և վաննայով, փոքրիկ նախասրահով, դրանցից մեկը հարմարեցված հաշմանդամների համար), յուրաքանչյուրը ոչ պակաս քան 6 քմ մակերեսով, • երկու աշխատասենյակ աշխատողների համար, յուրաքանչյուրը ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, • հանգստի սենյակ՝ ոչ պակաս, քան 25 քմ մակերեսով: • զբաղվածության, ժամանցի և հանգստի սենյակ, ոչ պակաս, քան 30 քմ մակերեսով, • խոհանոց-ճաշասենյակ, ոչ պակաս, քան 20 քմ մակերեսով, • լվացք և արդուկ անելու սենյակ, ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, • պահասենյակ՝ փափուկ գույքի և հանդերձանքի ու մթերքի պահեստավորման համար, ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, ստելաժներով: 2. Պատվիրատուի լիազորությամբ՝ նախագծողի կողմից փոքր տան նախագծման համար շահագրգիռ մարմիններից անհրաժեշտ տեխնիկական պայմանների ստացում: 3. Փոքր տան վերակառուցման էսքիզային հատակագծային լուծումները համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Հավելված N 1.2
«26» ապրիլ 2021թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
(ՆԱԽԱԳԾԱՅԻՆԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 7-րդ փողոցի թիվ 18 հասցեում գնված առանձնատունը որպես տարեցների շուրջօրյա խնամքի փոքր տուն վերակառուցման հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	• ՀՀ Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի տարեցների շուրջօրյա խնամքի փոքր տունը (այսուհետ՝ փոքր տուն) կազմակերպվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Մրգաստան համայնքի 7-րդ փողոցի թիվ 18 հասցեում գնված առանձնատունը վերակառուցելու միջոցով, • գնված առանձնատունը երկհարկանի է, տուֆակերտ <<Միդիս>> տիպի շարվածքե պատերով, բնակելի մակերեսը կազմում է 282 քառ.մետր, զբաղեցրած և օգտագործման հողամասի մակերեսը 0.87 հա՝ համաձայն առանձնատան սեփականության իրավունքի N 18022020-04-0060 վկայականի, • ձեռքբերված առանձնատան հնարավորություններից ելնելով՝ նախատեսվում է վերակառուցման միջոցով փոքր տանը ապահովել 6-10 տարեցի շուրջօրյա բնակությունը:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	Նախատեսվում է՝ • ուսումնասիրել առանձնատան տեխնիկական վիճակը և սեյսմոկայունությունը, • արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակը, • նախագծով նախատեսել փոքր տան ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության, կապի, ջրահեռացման, հակահրդեհային ազդանշանման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում, • նախագծով նախատեսել փոքր տան համալրում՝ հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց

	մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, վերհան սարք), • նախագծով նախատեսել փոքր տան տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, ստվերածածկ մաս, տարածքը պետք է ցանկապատված լինի առավելագույնը 1,6 մետր բարձրությամբ մետաղական ցանցե ցանկապատով, փոքր տան տարածքը պետք է ունենա նաև առանձնացված մաս, որտեղ պետք է տեղադրված լինեն աղբամաններ՝ հիմնական շենքից անհրաժեշտ հեռավորությամբ, • կառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն (գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման՝ առկայության դեպքում) համակարգեր՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով, իսկ կոյուղու կենտրոնացված համակարգի բացակայության դեպքում տեղադրել բիո-մեխանիկական մաքրման կայան կամ կառուցել կոյուղու կուտակման հոր՝ անհրաժեշտ հաշվարկային ծավալով, • նախագծման ընթացիկ աշխատանքները և առաջարկվող նյութերը աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ: **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** • փոքր տան կառուցման նախագիծ, նախատեսված 6 - 10 տարեցի շուրջօրյա խնամքի իրականացման համար, • ստվերածածկ մաս՝ 6 - 10 մարդու հաշվարկով, • այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների:
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** • ՀՀ կառավարության 07.11.2019 թ. N 1555 - Ն որոշում: **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** • Ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ, • գնված առանձնատան, զբաղեցրած և օգտագործման համար հատկացված հողամասի սեփականության վկայական՝ անհրաժեշտ

	նպատակային և գործառնական նշանակություններով, • արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի եզրակացություն, • նախագծման պայմանագրին կից նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), • ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (բնապահպանություն, առողջապահություն, քաղաքաշինություն և այլն), • այլ անհրաժեշտ փաստաթղթեր: **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** • ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին», • ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին • ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N263-Ն հրաման, • ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու և հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին • ՀՀՇՆ II-7.02-95. Շինարարական նորմեր. շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների • ՀՀ կառավարության 13.12.2007թ «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային

	կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշում, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020 թ.-ի N 95-Ն հրամանով հաստատված «Հասարակական շենքերի և շինություններ» շինարարական նորմեր, • ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» թիվ 43-Ա հրաման, • ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին», • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ թիվ 102-Ն հրաման, • «Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, • ՀՕ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, • ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ, • ՀՀ կառավարության 25.12.2014 թ թիվ 1504-Ն որոշում «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին», • ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր:
Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ

	քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» Նախագծի բոլոր բաժինները մշակել՝ հաշվի առնելով առաջադրանքի բնույթը /երկհարկանի քարե առանձնատան վերակառուցում/: <u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u> 12. Ընդհանուր բացատրագիր, 13. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ): 14. Ճարտարապետաշինարարական մաս • Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/: 15. Կոնստրուկտիվ մաս • կոնստրուկտիվ լուծումներ, • կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն: 16. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր), • էլեկտրամատակարարման /ներառյալ հողանցման համակարգը/, լուսավորության /Ինսոլիացիոն հաշվարով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, կապի, հակահրդեհային ազդանշանման ցանցեր և այլն, • Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն, • Կահավորման և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով հագեցման նախագիծ՝ ներառելով ընդհանուր նախահաշվի կազմի մեջ, որպես առանձին բաժին՝ ընդ որում հագեցումը պետք է լինի ամբողջական: 17. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ: 18. Շինարարության կազմակերպման նախագիծ: 19. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում: 20. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ: 21. էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

	22. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ: **Համաձայնեցումներ** *Նախագծի համաձայնեցում* 7. Համայնքի ղեկավարի, 8. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, 9. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, 10. ՀՀ առողջապահության նախարարության, 11. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ: 12. Ոլորտի գլխավոր կարգադրիչ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
Այլ պահանջներ	*Եզրակացություններ* Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում՝ • Նախագծողի կողմից առանձնատան տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունների, տեխնիկական պայմանների ձեռքբերում: **Փորձաքննություններ** • Որպես միջինից բարձր ռիսկայնության (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ՝ նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում, • Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության • Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման գործընթացի ապահովում՝ Պատվիրատուհի հետ համատեղ: **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**

- փոքր տան շահագործման առավելագույն ժամկետ,
- առանձին նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ:

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, հայերեն և ռուսերեն լեզուներով,նախահաշիվը ներկայացնել նաև էլեկտրոնային տարբերակով կրիչի վրա:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 օրացուցային օր:

ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ

Ըստ անհրաժեշտության (եթե փոքր տան պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

4. Առաջադրանքով նախատեսված հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներին համապատասխան՝

Փոքր տունը պետք է ունենա՝

	• երկու մարդու հաշվարկով ննջասենյակներ, յուրաքանչյուր ննջասենյակի մակերեսը պետք է կազմի 13-ից 15 քմ մակերես, • երկու սանհանգույց (2 զուգարան, 2 լոգարան՝ ցնցուղով և վաննայով, փոքրիկ նախասրահով, դրանցից մեկը հարմարեցված հաշմանդամների համար), յուրաքանչյուրը ոչ պակաս քան 6 քմ մակերեսով, • մեկ աշխատասենյակ աշխատողների համար, յուրաքանչյուրը ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, • հանգստի սենյակ՝ ոչ պակաս, քան 20 քմ մակերեսով: • զբաղվածության, ժամանցի և հանգստի սենյակ, ոչ պակաս, քան 20 քմ մակերեսով, • խոհանոց-ճաշասենյակ, ոչ պակաս, քան 20 քմ մակերեսով, • լվացք և արդուկ անելու սենյակ, ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, • պահասենյակ՝ փափուկ գույքի և հանդերձանքի ու մթերքի պահեստավորման համար, ոչ պակաս, քան 10 քմ մակերեսով, ստելաժներով: 5. Պատվիրատուի լիազորությամբ՝ նախագծողի կողմից փոքր տան նախագծման համար շահագրգիռ մարմիններից անհրաժեշտ տեխնիկական պայմանների ստացում: 6. Փոքր տան վերակառուցման էսքիզային հատակագծային լուծումները համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝
գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ 01273917
Հ/Հ 220573330143000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝
Հ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 26 » ապրիլ 2021թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանք															
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Apրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1.	71241200/501	Հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ /Ակնաշեն համայնք/					%	%	%	%	%	%	%	%	1 800 000
2.	71241200/502	Հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ /Մրգաստան համայնք/					%	%	%	%	%	%	%	%	1 800 000
	Ընդամենը						%	%	%	%	%	%	%	%	3 600 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ճարտարին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ 01273917
Հ/Հ 220573330143000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝
Հ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

21093

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ԵՎ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«26» ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ
N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« 25 » «Հոկտեմբերի» 2021թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով «26» մարտի 2021թ. N «ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, և ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1737-Ն որոշումը կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>

1.1 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u>

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011019321 Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն ՀՎՀՀ՝ 01273917 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 220573330143000 Տնօրեն՝ Հ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
2021թ. «25» «հոկտեմբերի» կնքված
N 1 համաձայնագրի
Հավելված N 2
«26» մարտի 2021թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-21/15-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանք															
Հա փա բաժնի հա մա րը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1.	71241200/501	Հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ /Ակնաշեն համայնք/										1 800 000	1 800 000	1 800 000	1 800 000
2.	71241200/502	Հետազոտական և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ /Մրգաստան համայնք/										1 800 000	1 800 000	1 800 000	1 800 000
	Ընդամենը											3 600 000	3 600 000	3 600 000	3 600 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ճարտարշին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ՝ 01273917
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220573330143000
Տնօրեն՝
Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.